Նորին Ամենապատուութիւն
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի

Ծանր վշտով յայտնում ենք ձեզ որ Յուլիսի վեցին գինեալ Օմօնականներ յարձակում գործած են Արցախում Գանձասարի պատմական Վանքի վրայ, ահաբեկած են եկեղեցու աշխատաւորներին եւ տապալած են Վանքի շրջափակում գտնուող Ղարապաղի Հայ իշխանների հնադարեան գերեզմանաքարերը, զէնք փնտռելու պատրուակով: Այս անօրէն սրբապղծութեան մասին մեր բողոքի խօսքը ուղարկած ենք Մոսկուա պետական բարձր մարմիններին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին: Առ Աստուած աղօթեցէք մեր տանջահար ժողովրդի փրկութեան ու խաղաղութեան համար:

Վազգէն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՍՕՆԱ ՄԱՅՐԱՊԵՏ ՎԱՆԵՐԵԱՆ

1989ի վերջին օրերուն կը վախճանէր Ս. Աթոռոյս վերջին մայրապետը: Իսկ 1990ի ընթացքին Ս. Քաղաք կը ժամանէր Սօնա Վանեան, փափաք յայտնելով որ ընդունուի Վանուցս Մայրապետաց շարքէն ներս: Իր խնդրանքը ընդունուած ըլլալով, Շաբաթ, 31 Օգոստոսի առաւօտուն, Ս. Պատարագի սկզբնաւորութեան, ան մասնաւոր օրհնութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ձեռքէն կ'ընդունէր Մայրապետական քօղն ու զգեստը:

Սօնա Մայրապետ ծնած է Սայտա (Լիբանան) 2 Հոկտ. 1942ին:

20 Օգոստոս 1990ին եկած է Երուսաղէմ:

digitised by A.R.A.R.@